«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Միջառարկայական կապ

Հետազոտող ուսուցիչ՝ Հեղինե Քամալյան

Արմավիրի Տանձուտի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Նարինե Վասիլյան

ԱՐՄԱՎԻՐ

2023

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Ներածություն ........................................................... 3

2. Գրական ակնարկ- ........................................................... 5

3. Գործնական համատեքստ ........................................................... 8

4. Եզրակացություն ........................................................... 12

5. Օգտագործված գրականության ցանկ ........................................................... 14

6. Դասապլաններ ...........................................................

## Ներածություն

Շուրջ մի քանի տարի է, ինչ Հայաստանի կրթական համակարգը մտել է վերափոխումների նոր շրջան:

Անկախության առաջին օրերից ձևավորվել է ազգային կրթական համակարգ, և բարեփոխումները կրել են շարունակական բնույթ: Առհասարակ Հայաստանի կրթական ոլորտը ակտիվորեն ներառված է միջազգային կրթական տարածքում, մասնավորապես եվրոպական քաղաքակրթական համակարգում: Հայաստանում հանրակրթությունը 12-ամյա է, և ներդրված են չափորոշիչներ, որով այսօր առաջնորդվում է աշխարհը: Մշակվել Կրթության զարգացման ծրագիր, որը ունի կարևոր բաղադրիչներ, հանրակրթության պետական ծրագիր, որն ամբողջությամբ կարգավորել ու է այդ ոլորտի զարգացման հեռանկարները, առկա ռեսուսների ճիշտ տեղաբաշխման ձևաչափ, բարձրագույն կրթության համար իր ծրագիր, որը իր մեջ ներառում է ռացիոնալիզացիա, համալսարան-ինստիտուտ հարաբերությունների վերանայում, կրեդիտային համակարգ, ցանցային համալսարաններ: Միաժամանակ այդ ամբողջ ծրագրային փաթեթի համար միաին դրել են մեծ ներուժ ունեցող ծրագրերի կենսագործում, մասնավորապես էլեկտրոնային, ֆինանսական, ձեռնարկատիրական կրթության, ֆիզիկական կուլտուրայի բարելավում, որոնք ըստ էության հմտություններ զարգացնող համկարգեր են: Այսօրվա դպրոցի շրջանավարտը բնականաբար պետք է լինի ավելի պատրաստված, քան անցած դարի կեսին և անգամ դարավերջի շրջանավարտը:

*Հետազոտության թեմայի արդիականությունը*: Հանրակրթության և ուսուցման մեթոդների զարգացման ժամանակակից փուլը կարելի է բնորոշել ուսուցման նոր, արդյունավետ ուղիների մշտական որոնմամբ: Որպես կանոն, ուսուցման նոր, ժամանակակից մեթոդները կողմնորոշված են դեպի ուսումնասիրվող երևույթների և տարրերի ֆունկցիոնալ բաղադրիչի վերլուծությունը և յուրացումը:

Այդ տիպի մեթոդներից մեկն է միջառարկայական կապերի բացահայտման մեթոդը, որը դասվում է նախագծային մեթոդների շարքին և նպատակ ունի համադրել տարբեր գիտություններում առկա գիտելիքները ուսումնասիրվող երևույթի մասին: Սակայն այս մեթոդի կիրառությունը հանրակրթական դպրոցում դեռևս ամբողջովին և լիակատար

ներդրվածություն չունի, ինչի հետևանքով այն բախվում է որոշակի դժվարությունների թե մանկավարժների, թե աշակերտների համար:

*Հետազոտական աշխատանքի նպատակն* է ուսումնասիրել միջառարկայական ինտեգրման նախագծային մեթոդի կիրառության հնարավորությունները առարկայի ուսուցման ընթացքում:

Հետազոտական աշխատանքի շրջանակներում առաջադրվել են հետևյալ *խնդիրները*.

- Ուսումնասիրել միջառարկայական կապերի նախագծային մեթոդի առանձնահատկությունները;
- Ուսումնասիրել միջառարկայական կապերի կիրառության առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում;
- Առանձնացնել միջառարկայական կապերի մեթոդի կիրառության ձևերը և եղանակները հանրակրթական դպրոցում առարկայի ուսուցման ընթացքում:

Այսպիսով, ուսուցման նոր մեթոդների կիրառությունը հանրակրթական դպրոցում բավականին արդիական խնդիր է մեր ժամանակներում, քանի որ հասարակական կյանքում և գիտության բնագավառում տեղի ունեցող փոփոխությունները նոր մոտեցումների մշակման անհրաժեշտություն են թելադրում:

## Գրական ակնարկ

Ժամանակակից դպրոցներում ի հայտ է գալիս կողմնորոշվածություն դեպի ուսուցման նոր, համադրված և զուգորդված մեթոդների կիրառությունը, որոնք թույլ են տալիս վերլուծել ուսումնասիրվող երևույթը առավել խորքային և բազմակողմանիորեն, ձեռք բերել կոմպլեքսային գիտելիքներ երևույթի մասին և հասկանալ, թե ինչպես կարելի է կիրառել ստացված գիտելիքը առօրյա կյանքում:

Նախագծային մեթոդը խնդրի (տեխնոլոգիաների) մանրամասն մշակման միջոցով դիդակտիկ նպատակին հասնելու մեթոդ է, որը պետք է ավարտվի միանգամայն իրական, շոշափելի գործնական արդյունքով՝ ձևակերպված այս կամ այն ձևով:[1]

Այն որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարել ու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով: [2]

Նախագծային մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ հետևյալ կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման համար.

1. Ռեֆլեկտիվ հմտություններ;
2. Որոնողական, հետազոտական հմտություններ;
3. Համագործակցային հմտություններ;
4. Կառավարման կարողություններ, հմտություններ;
5. Շնորհանդեսների պատրաստման հմտություններ:

Նախագծային մեթոդի շրջանակներում հատուկ առանձնանում է այսպես կոչված միջառարկայական ինտեգրման մեթոդը: Այն իրենից ներկայացնում է տարբեր ուսումնական առարկաների և ծրագրերի փոխադարձ համաձայնեցման

[1] Полат Е. С. Метод проектов, М.: «Вопросы интернет образования», 2008, с. 25

[2] Новые педагогические и информационные технологии в системе образования, Учебное пособие / Е. С. Полат , М. Ю. Бухаркина, М. В. Моисеева, А. Е. Петров; под ред. Е. С. Полат, М.: «Академия», 1999, с. 36

գործընթաց՝ մասնագիտական և ուսումնական գործունեության միասնական, անդադար և ամբողջական զարգացման տեսակետից:

Միջառարկայական կապերի առկայությունը ուսումնական գործընթացում թույլ է տալիս աշակերտների մոտ պատկերացումներ ձևավորել ուսումնասիրվող առարկայի և դրան վերաբերող ունիվերսալ օրենքների մասին:

Միջառարկայական կապերը կարելի է սահմանել, որպես մանկավարժական կատեգորիա, որը կիրառվում է նշանակելու համար համադրված և ինտեգրված պատկերացումներ օբյեկտների և երևույթների մասին, որոնք իրենց արտացոլումն են գտել ուսուցման բովանդակության, ձևերի և մեթոդների մեջ:[3]

Միջառարկայական կապերի կիրառությունը ուսումնական գործընթացում թույլ է տալիս ուսուցչին իրացնել մի քանի կարևոր ուսումնական նպատակներ, որոնց թվում կարելի է առանձնացնել հետևյալները.

- Դրանք հնարավորություն են տալիս ուսուցչին աշակերտների մոտ ամբողջական պատկերացումներ ձևավորել բնության, իրենց շրջապատող առարկաների և երևույթների մասին, դրանց ամբողջականության և փոխադարձ կապվածության մասին;
- Դրանք թույլ են տալիս ուսուցչին աշակրտների մոտ ձևավորել այնպիսի որակներ, ինչպիսիք են նրանց գիտելիքների խորությունը, գիտակցվածությունը, ճկունությունը և գործնական մեծ նշանակությունը;
- Դրանց կիրառությունը ուսուցման ընթացքում թույլ է տալիս աշակերտներին ստեղծագործական մոտեցում, տրամաբանական միտք ձևավորել՝ ուսումնասիրվող նյութի շրջանակներում և առօրյա կյանքում:
- Դրանք ընդլայնում են աշակերտների աշխարհայացքը, ինքնուրույնության աստիճանը;

---

[3] Ռաֆայելյան Ն., Միլիտոսյան Լ., Նախագծի մեթոդը՝ որպես միջառարկայական ինտեգրման միջոց, Երևան 2005, էջ 12

- Դրանց օգնությամբ ուսուցիչը կատարելագործում է ուսումնական նյութի բովանդակությունը, դրա մատուցման ձևերի և մեթոդների կազմակերպումը:

Միջառարկայական կապերի կիրառությունը ուսուցանման ընթացքում, իր հերթին, հիմք է ապահովում աշակերտների գիտելիքների ինտեգրման, դրանց գործնական նշանակության ընկալման համար:

Այսպիսով, հանրակրթական դպրոցում ավանդաբար կիրառվում են ուսուցման մեթոդներ, հնարներ, միջոցներ, ձևեր և եղանակներ, որոնք ժամանակին փորձարկվել են: Դրանց զգալի մասն իրենց զարգացումն են ապրել ու հարմարվել արդի պահանջներին: Ըստ արդի պահանջների՝ աշակերտներին չպետք է հաղորդել միայն պատրաստի գիտելիքներ, այլ պետք է ուսուցումը կազմակերպել զարգացնող ոճով, որպեսզի նրանք գիտելիքներ ձեռք բերեն իրենց սեփական ջանքերով:

Կրթության զարգացման միջազգային միտումները մանկավարժական նոր տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտություն են առաջ բերել: Դրանցից են ուսուցման ինտերակտիվ մեթոդները, ուսուցում՝ համակարգչով, տեղեկություն՝ համացանցով, աշակերտակենտրոն և համագործակցային ուսուցում և այլն:

## Գործնական համատեքստ

Հանրակրթական դպրոցում ուսուցանվող որևէ առարկայի ուսումնասիրության և պրակտիկ կյանքում դրա կիրառելիության վերաբերյալ աշակերտների պատկերացումների զարգացման և խորացման համար բավականին նպատակահարմար է թվում միջառարկայական կապերի ինտեգրման մեթոդի կիրառությունը, որը թույլ է տալիս խորապես ամրապնդել այն գաղափարը, որ դպրոցական գիտելիքները կապված են կյանքի յուրաքանչյուր բնագավառի հետ, ինչպես նաև գիտական այլ ուղղությունների հետ:

Նախկին կրթական համակարգին ավելի շատ բնորոշ էր այսպես կոչված, «առարկայակենտրոն» սկզբունքով ուսուցումը: Յուրաքանչյուր առարկայական գիտության, այդ թվում բնագիտական գիտությունների, հումանիտար գիտությունների, հայոց լեզվի և այլ գիտությունների դասավանդմամբ նախատեսված գիտելիքների յուրացումը աշակերտների կողմից միշտ չէ, որ հասել է իր նպատակին: Այդ իսկ պատճառով սովորողի մեջ չի ձևավորվում ամբողջական աշխարհայացք դասավանդվող այդ կամ այն առարկայից: Այսպես կոչված առանձին-առանձին ուսուցման արդյունքում աշակերտների մոտ մնում են գիտելիքների միայն որոշակի հատվածներ, որոնք նաև դժվար է լինում կապել իրականության հետ, գտնել այդ գիտելիքի յուրացման անհրաժեշտությունը և դրա օգտակարությունը՝ շրջակա աշխարհի հետ փոխազդելու համատեքստում: Մինչդեռ, համակարգված ուսումնառության հիմնական նպատակը կայանում է նրանում, որպեսզի աշակերտները քայլ առ քայլ սովորեն և հասկանան, թե ինչ է տեղի ունենում շրջակա աշխարհում, ինչ գործընթացներ և երևույթներ կարելի է տեսնել պրակտիկ կյանքում և որքանով են դրանք արտացոլվում դպրոցում իրենց ստացած գիտելիքների մեջ և դրանց ներքո:

Առարկայի, ինչպես, օրինակ, պատմության, աշխարհագրության և այլն, դասավանդման ընթացքում միջառարկայական կապերի բացահայտումը և դրանց մատուցումը աշակերտներին թույլ է տալիս նաև առավել խորը յուրացնել տվյալ առարկայի էությունը և դրա նշանակությունը պրակտիկ գործունեության համար, ինչպես նաև ողջ շրջակա աշխարհի համար, որտեղ

տեղ են գտնում ամենատարբեր օրինաչափություններ: Այսինքն, դասարանը պետք է լինի «դրսի աշխարհի» և իրական կյանքի մի յուրատեսակ կարող օղակ:[4]

Ժամանակակից պայմաններում յուրաքանչյուրս գիտենք նոր տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների դերի մասին առհասարակ մարդու կյանքում, և մասնավորապես ուսումնառության ընթացքում: Այս գործընթացներն իրենց ուրույն ազդեցությունն են գործում սովորողների գիտելիքների ձևավորման, մտածողության զարգացման, վարքագծի ու հետաքրքրությունների վրա: Որպես փոփոխվում է սերունդը, փոփոխվում են նրա մտածողությունը, ձգտումներն ու սպասելիքները, արժեքային համակարգը: Հետևաբար՝ չեն կարող չփոխվել կրթական խնդիրներն ու կրթությանը ներկայացվող պահանջները: Ուսումնառության ընթացքում փոխվում է աշակերտի դերը, ուսուցչակենտրոն ուսուցման եղանակից անցում է կատարվում աշակերտակենտրոն ուսուցման: Այսօրվա սովորողին հետաքրքրում է, թե ի՞նչ է կատարվում իր շրջակա աշխարհում, և ինչպե՞ս կողմնորոշվել այնտեղ: Նա այլևս չի ուզում դասի ընթացքում զգաստ ու լուռ, միշտ կրավորական վիճակում լինել:

Խիստ էական են ուսուցման ընթացքում աշակերտի մասնակցությունն ու ակտիվությունը, ազատ մտածելը, և անկաշկանդ մթնոլորտի առկայությունը: Աշակերտը դառնում է ուսուցման գործընթացի և՛ օբյեկտ, և՛ սուբյեկտ: Սովորողների կողմից ձեռք բերված գիտելիքները սոցիալական կյանքում կիրառելու կարողությունների ու հմտությունների ձևավորումն է:

Պատմության, աշխարհագրության, հասարակագիտության և այլ առարկաների ուսուցման արդյունավետության բարելավման համար կարևոր է այդ առարկաների միջառարկայական և ներառարկայական կապերի զարգացումը և ինտեգրումը: Այդ կապերի ուսուցումը նպատակ է հետապնդում.

- Ընդլայնել կապերի գործնական, կիրառական ուղղվածությունը և դարձնել այն ավելի հետաքրքիր;
- Ընդգրկել ինտեգրված դասապրոցեսում առարկայական պատմական նյութեր;

[4] Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Եր., «Ան-Ջոն», 2012

- Միջառարկայական և ներառարկայական կապերով զարգացնել գիտական լեզվատրամաբանական մտածողությունը և բնությունը ճանաչելու ունակությունները;
- Կազմել առարկաների միջառարկայական կապերով թեստեր;
- Նոր տեխնոլոգիաների կիրառմամբ ստեղծել «Նրանք ստեղծեցին գիտությունը» տեղեկատվական դաշտը:

Հայոց և համաշխարհային պատմության ուսուցման արդյունավետության համար միջառարկայական կապերի բացահայտումն ունի հսկայական նշանակություն: Մասնավորապես, այդ կապերի միջոցով այս առարկաների դասավանդումը ուսուցչին թույլ է տալիս առավել արդյունավետ կերպով կազմակերպել ուսումնառության գործընթացը և լուծել մի շարք խնդիրներ.

- Բացատրել, ուղղորդել, ներկայացնել առարկայական գիտելիքի դերը տվյալ թեմայի ուսումնասիրման գործընթացում:
- Կրկնել, ամրապնդել, հիմնավորել, վերլուծել միջառարկայական կապերը:
- Հետազոտել, վերլուծել առաջադրանքներ միջառարկայական կապերով:

Սակայն, միջառարկայական կապերի ուսումնասիրությունը և դրանց կիրառությունը դասավանդման ընթացքում ոչ միայն ուսուցչի համար է նշանակալի գործիք, այլև հենց աշակերտների: Դրանք նաև թույլ են տալիս աշակերտներին հանգել մի շարք ուսումնական խնդիրների հաջող և արդյունավետ լուծմանը, ինչպես, օրինակ.

- Ըմբռնել, հասկանալ միջառարկայական և ներառարկայական կապերը արտահայտող հասկացությունները, օրենքները և օրենքների ձևակերպումները:
- Տարբերակել, առանձնացնել օրենքների կիրառելիության ոլորտները:
- Առանձնացնել գլխավորը՝ կոնկրետ առարկայի դերը, միջառարկայական արտահայտող թեմաներում:
- Հասկանալ բանաձևերը, կատարել գիտական ընդհանրացումներ, մտահանգումներ:

Բազմակողմ միջառարկայական կապերի միջոցով որակապես նոր մակարդակով լուծվում են ոչ միայն սովորողներին դասավանդելու,

զարգացնելու և կրթելու խնդիրները, այլև հիմք է դրվում իրականության բարդ խնդիրների համապարփակ տեսլականի, մոտեցման և լուծման համար:

Առարկաները, որպես կանոն, սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ: Օրինակ, կարող ենք փաստել, որ հայոց կամ համաշխարհային պատմության դասավանդումը սերտ կապ ունի նաև հայոց լեզվի դասավանդման հետ և աշակերտների՝ լեզվի իմացության մակարդակի հետ: Այս համատեքստում ուսուցման հիմնարար նպատակներից մեկն է աշակերտներին սովորեցնել վարժ կարդալ, գրագետ շարադրել մտքերը, հասկանալ շարադրանքի առանցքային հիմնահարցերը և այլն: Այս պարագայում ուսուցչի նպատակն է նաև դասապրոցեսի ժամանակ հետևել և ուղղումներ կատարել այն դեպքերում, երբ աշակերտը սխալ շարադրությամբ մտքեր է արտահայտում: Ուղղել յուրաքանչյուր բառ, որը արտասանվում է ոչ մաքուր հայերենով: Անգամ հարկավոր է ուղղել և երեխայի ուշադրությունը հրավիրել գրավոր աշխատանքում տեղ գտած ուղղագրական սխալներին:

Յուրաքանչյուր դասի կարևորագույն նպատակներից մեկն է սովորեցնել երեխաներին ճիշտ խոսել և գրագետ գրել: Հատկապես հումանիտար խմբին պատկանող առարկաների դասաժամերին հատուկ ուշադրություն պետք է դարձնել այդ նպատակի իրականացմանը: Փորձը ցույց է տալիս, որ հաճախ սովորողները չեն կարողանում բուն առարկայական գիտելիքները շարադրել հայերենի վատ իմացության պատճառով: Ուստի աշակերտներից պետք է պահանջել ճիշտ գրել տերմինները, հստակորեն հիմնավորել կատարվող գործողությունները, մշտապես կրկնել սովորած նյութը, գրագետ խոսել: Դա թույլ է տալիս հետաքրքրություն առաջացնել դասի նկատմամբ և ցույց տալ հումանիտար առարկաների կապը գրականության, լեզվաբանության հետ:

Միջառարկայական կապերն ուժեղացնում են բոլոր դիդակտիկական սկզբունքների դերն ուսուցման իրական գործընթացում: Սովորողների հաջողությունը մի առարկայից հաճախ կախված է մեկ այլ առարկայի նրանց գիտելիքներից և հմտություններից:

Այսպիսով, մարդկության պատմության ընթացքում մշակվել են կրթության զանազան տեսություններ և մեթոդներ, որոնց հիմնական նպատակը դրա արդյունավետության բարձրացումն ու բազմակողմանի, լիարժեք անձի ձևավորումն է: Դրանցից մեկն է համարվում

միջառարկայական ինտեգրման մեթոդը, որն այսօրվա դրությամբ համարվում է առավել արդյունավետ ուսումնական մեթոդներից մեկը: Այն թույլ է տալիս միավորել և համադրել գիտելիքներ տարբեր գիտական ուղղություններից և ուսումնական առարկաներից:

Այս մոտեցումն արդարացված է նաև հանրակրթական դպրոցում տարբեր առարկաների ուսուցման ընթացքում: Սա պայմանավորված է նրանով, որ դպրոցական առարկաներն, ըստ էության, միջգիտակարգային գիտելիքի ոլորտից են, որոնց ուսումնասիրությունը ունի իսկական տեսական և գործնական նշանակություն:

**Եզրակացություն**

Որևէ առարկայի միջառարկայական ուսումնասիրությունը և ուսուցումը դպրոցում հետապնդում է մի շարք նպատակներ, որոնք կապված են գիտելիքների ինտեգրման, ընդհանրացման, համադրման և զուգորդման հետ։ Սա պայմանավորված է նրանով, որ այս կամ այն գիտական կատեգորիաները, հասկացությունները իրենց մեջ կրում են գիտելիքներ տարբեր ոլորտներից, ներառում են հարակից գիտությունների և գիտական ոլորտների կատեգորիաներ, հասկացություններ և այլն: Գիտելիքն, ըստ էության, կրում է համակարգված բնույթ: Դա նշանակում է, որ նաև հանրակրթական դպրոցում, որևէ առարկայի ուսուցումը սերտորեն փոխկապված է այլ առարկաների հետ։ Միջառարկայական կապերի բացահայտումը օգնում է աշակերտների մոտ ձևավորել հենց այդպիսի համակարգային գիտելիքներ, որոնք չեն սահմանափակվում որևէ մեկ ոլորտով կամ ուղղությամբ, այլ հիմնվում են բազմակողմանի և փոխկապակցված գիտելիքների վրա։

Միջառարկայական ինտեգրման մեթոդի կիրառությունը հանրակրթական դպրոցում ուսուցման ընթացքում խորհուրդ է տրվում իրականացնել ոչ միայն լոկ ուսումնական նյութի մատուցման միջոցով, այլ կազմակերպելով հետաքրքիր խաղ-վիկտորինաներ, համապատասխան հանձնարարություններ տալ աշակերտներին:

Այս մեթոդի կիրառման համատեքստում ուսուցչի հիմնական և կարևոր նպատակն է աշակերտներին ուղղորդել, սովորեցնել, հետազոտել, ստեղծագործել, որոնել: Հենց այդպես էլ դասը դառնում է նաև գրավիչ դերախաղ, սեմինար: Այսօրվա մանկավարժությունը հակված է մտածելու, որ նմանատիպ դասերը սովորողի՝ մարդկային դրսևորման հիմք կարող են հանդիսանալ:

Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացում իրականացնում են կրթական, զարգացնող, դաստիարակչական, կառուցողական գործառույթներ: Ուսուցիչը միջառարկայական կապերի միջոցով նպաստում է սովորողների գիտելիքների ինտեգրմանը, բազմակողմանի զարգացմանը, ինտելեկտի կատարելագործմանը, մտահորիզոնի ընդարձակմանը: Միջառարկայական կապերի արդյունավետ օգտագործմամբ էլ կստեղծվեն լայն հնարավորություններ՝ սովորողների կողմից շրջակա

աշխարհի ամբողջական գիտական պատկերի ստացման յուրացված գիտելիքների կիրառելիության ոլորտների բացահայտման, դրանք փոխանցելու կարողությունների ձևավորման տրամաբանական, ճանաչողական, հաղորդակցական, համագործակցային ու ստեղծագործական կարողությունների ու հմտությունների ձևավորման համար:

Հանրակրթական դպրոցում աշխատող յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է ոչ միայն գերազանց տիրապետել իր մասնագիտությանը որպես մանկավարժ, այլև որոշակի ինֆորմացիոն պաշարներ ունենալ նաև մյուս առարկաներից: Ինտեգրված դաս իրականացնելու համար պահանջվում են նախապատրաստական լուրջ ջանքեր: Փորձը ցույց է տվել, որ այդ դասերի արդյունավետությունը բավականին բարձր է: Եվ միջառարկայական կապի օգտագործումը երբեք և ոչ մի դասարանում ինքնանպատակ չպետք է լինի, այլ միայն միջոց հիմնական նպատակին հասնելու համար:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Եր., «Ան-Զոն», 2012
2. Ռաֆայելյան Ն., Միլիտոսյան Լ., Նախագծի մեթոդը՝ որպես միջառարկայան ինտեգրման միջոց, Երևան 200
3. Новые педагогические и информационные технологии в системе образования, Учебное пособие / Е. С. Полат , М. Ю. Бухаркина, М. В. Моисеева, А. Е. Петров; под ред. Е. С. Полат, М.: «Академия», 1999
4. Полат Е. С. Метод проектов, М.: «Вопросы интернет образования», 2008